Շամախի (քաղաքը) իւր անունն կը սերէ Շամախ Ի. Շուզա'ից, որ Շիրուանի իշխան էր՝ Սայիդ Ի. Սալմ ալ Բահլիի ի Հայս կառավարելու ժամանակ։ Ինձ աւանդել է Մահմեդ Ի. Իսմայիլ ծերերի զրուցելով, թէ Հայերը ապստամբեցան Հասան Ի. Քահթաբայ Ալթայի կառավարութեան ժամանակ (Ի. Ուսայդ եւ Բակկար Ի Մուսլիմ Օքայլի հեռանալուց յետոյ) հայ Մուշեղի (مُوشَائِيل) առաջնորդութեամբ. ալ Մանսուր ուղարկեց Հասանին օգնական զօրք Ամիր Ի. Իսմայէլի հրամանատարութեան ներքոյ. Հասան ճակատեցաւ Մուշեղի հետ, սպաննեց նորան, նորա բազմութիւնը ցրեցաւ, եւ բարեկարգեցաւ երկիրը։ Այս Հասանի անուամբ կոչուած են Փայտակարանի Հասան գետը, Պարտաւի Հասան այգին եւ Հասանիայ ագարակը։

Հասան Ի Քահթաբիից յետոյ կառավարեցին հերթով Օսման Ի. Օմարայ Ի. Խուբայմ, Ռաւհ Ի. Հատիմ Մուհալլաբի, Խուզայմայ Ի. Խազիմ, Եզիդ Ի. Մազիադ ալ Շայբանի, Օբայդալլահ Ի. Մահդի, Ֆադլ Ի. Եահեայ, Սայիդ Ի. Սալմ, Մահմեդ Ի. Եզիդ Ի. Մազիադ։ Խուզայմայի կառավարութիւնն ծանր էր. նա հաստատեց Դուինում եւ Նախիջեւանում երկրաշարժ, որ նորանից առաջ (այստեղ) գոյութիւն չունէր։

Հայաստանի իշխանք նստած էին իրանց երկրներում եւ նոցանից ամեն մէկը կը պաշտպանէր իւր գաւառը. երբ այստեղ էր գալիս ամիրապետի ոստիկանն, նոքա կը ջանային նորա սէրը գրաւել եւ, եթէ նա նոցա հետ ազնիւ, բայց խիստ կը վարուէր, նոքա նորան հարկ կը վճարէին, հակառակ դէպքում նորան հրապարակօրէն կը հայհոյէին եւ կ'արհամարէին նորա հրամանն։

Մամունի (813—833) ամիրապետութեան ժամանակ կառավարեց Խալիդ Ի. Եզիդ Ի. Մազեադ, որ կ'ընդունէր նոցանից ընծաներ եւ նոցա